# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-25/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար տեղեկատվության պահոցների կառավարման ծրագրային փաթեթի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 30.10.2025թ. N 397/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 14.11.2025թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Զ.Աղաջանյանը, Ս.Ավագիմյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

**Օրակարգ**
**Հայտերի բացման և գնահատման մասին**

**1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-25/6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Գալստյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-25/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «ՀԷՔՍԱԴԱ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Նարեկացի 54, բն 66)
2. «Բի Լայն» ՍՊԸ-ն (ք. Երևան, Խանջյան 50)
3. «ԴՈՔՍ ՔՈՄՊՅՈՒՏՐ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Պռոշյան փողոց, 11/5)

**2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

| Հ/Հ | Չ/Հ | Մասնակիցների անվանումները | Ծառայության անվանումը | Ներկայացրած գները ՀՀ դրամ | | | նախահաշվային ընդհանուր գինը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ | ԱԱ Հ | ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ | |
| 1 | 1 | «ՀԷՔՍԱԴԱ» ՍՊԸ | Տեղեկատվության պահոցների կառավարման ծրագրային փաթեթ | 23 900 000 | 20% | 28 680 000 | **29 000 000** |
| 2 | | «Բի Լայն» ՍՊԸ | | 24 000 000 | 20% | 28 800 000 | |
| 3 | | «ԴՈՔՍ ՔՈՄՊՅՈՒՏՐ» ՍՊԸ | | 24 087 500 | 20% | 28 905 000 | |

**3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած «ՀԷՔՍԱԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

5. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «ՀԷՔՍԱԴԱ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

2. Հաշվի առնելով, որ «ՀԷՔՍԱԴԱ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2025 թվականի գնումների պլանով հաստատված նախահաշվային գինը՝ «ՀԷՔՍԱԴԱ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

3. ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-25/6 ծածկագրով (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «ՀԷՔՍԱԴԱ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «ՀԷՔՍԱԴԱ» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյան

Անդամներ՝ Ձ.Աղաջանյան

Ս.Ավագիմյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան